մայ Արքունեաց այս միջամտութեան և տիրապետութեան ոգւոյն հակառակ կ'ցել են և մանաւանդ հիմայ Հռոմայ Արքունեաց ժամանակաւոր իշխանութիւնը դադարեալ ըլլալուն համար ամեն քրիստոնեայ Տէրութիւնք հաճեալ հաւանեալ և գոհ եղած են. վասն զի վերջացաւ և գրեթէ ոչնչացաւ Հռոմայ Արքունեաց տիրապետութեան այն ոգին, որ կրօնքի պատրուակաւ ազգաց և բոլոր քրիստոնէութեան մէջ յարատև երկպառակութիւն և անհանդստութիւն կը պատճառէր, և թերևս ալ տակաւին պատճառելու կը ջանայ. Խօսքերս այնպիսի եղելութեանց վրայ հիմնեալ են, որ ոչ ոք կրնայ ուրանալ. վասն զի վերջին տարուան դէպքերը և յեղափոխութիւնները աչքերնուս առջևն են.

Հռոմայ Արքունիքը գիտնալով որ միջամտութեամբ իր տիրապետութեան ոգին Արևմուտքի մէջ առաջ չի պիտի կարենայ տանիլ, իր գիտողութիւնը Արևելքի վրայ դարձուց, և իր գործքը առաջ տանելու համար իրեն մտմակից կամակից և կոյր գործիք գտաւ Գեր. Հասունը, որուն ինչ ըլլալը ամենուն յայտնի է. Այս տեղեկութիւնները համառօտապէս նշանակելէն յետոյ, վերի հարցմունքին պատասխանը այս է. Հռոմէն նուիրակ գալուն բուն պատճառը Հռոմայ Արքունեաց Արևելքի վրայ տիրապետութեան ոգի գործածելն է. Բայց գիտնայ Հռոմայ Արքունիքը, որ իր տիրապետութեան ոգին Արևմուտքի մէջ առաջ չերթալով, Արևելքի մէջ բոլորովին պիտի տկարանայ և ոչնչանայ.

Հռոմայ Արքունիքը Արևելցոց համար չի յանդգնի անարգաբար Խ––ր–օ անունը արտաբերելու. Մեր քաջայաղթ Ինքնակալին վարչութեամբը Օսմանեան Տէրութեան մէջ այնպիսի պաշտօնատէրներ կան, որ բնաւ չեն թողուր որ մէկ օտար մը ազգաց օրինաց և իրաւանց դէմ բռնաբարութիւն ընէ. Գիտնայ Հռոմայ Արքունիքը որ նոյն խել մեր ազգայնոց մէջ այնպիսի արք, աստուածասէր, ազգասէր և քաջանուն իշխաններ, և աւանդապահ, գիտուն և առաքինի եկեղեցականներ կան, որ իրենց անպարտելի միութեամբը և անխոնջ փութաջանութեամբը ազգային ներքին և արտաքին թշնամիները յաղթահարելով և նուաճելով՝ ազգային իրաւունք և արտօնութիւնքը, մէկ խօսքով՝ ազգութիւնը ամբողջ պիտի պահեն, և իրենց յաջորդաց և որդւոց լիակատար պիտի աւանդեն, և յետագայից ալ փառք և պարծանք պատճառելով անմահ յիշատակաց արժանի պիտի ըլլան.

Ազգայինք, յիշեցէք որ Հռոմէն երկրորդ նուիրակի մը գալը Հռոմայ Արքունեաց պարտութեան և անարգութեան նշան է. Հռոմայ Արքունեաց տիրապետութեան ոգին չէ թէ Հռոմայ համար յաղթութիւն, այլ նուաճումն պատճառեց, և միշտ պիտի պատճառէ. Իրաւանց պաշտպանը Աստուած է, և Ազգութեան պաշտպանութիւնը թէ Աստուծոյ և թէ մարդկանց առջև մեծ առաքինութիւն և արդարութիւն է. Հռոմայ Արքունիքը . . . . . Հասունին ձեռքով մեր ազգային արդարացի իրաւունքը յափշտակելու յանդգնեցաւ, և իր կարծեցեալ իրաւունքներէն և ժամանակաւոր իշխանութենէն զրկուեցաւ.

Ազգայինք, Հռոմէն եկող նուիրակին ըսենք որ Հռոմայ Արքունիքը իր կարծեցեալ իրաւունքը չի կորսնցնելու համար աշխարհ անցում ըրաւ, և արիւնհեղութեանց ալ պատճառ եղաւ. Ինչպէս հիմայ, ինչ համարձակութեամբ և . . . . . . կը յանդգնի մեր ազգային և բոլոր Արևելեան իրաւունքները յափշտակելու և ջնջելու. Ազգայինք, իրեն ըսենք որ Հայոց Ազգը իր քրիստոնէութիւնը արիւն թափելով ստացաւ, քրիստոնէութեամբը ազգութիւնը պահեց ազգային իրաւանց պաշտպանութեանը համար Հայաստանի դաշտերը ազգային անմեղ արեամբք ներկուեցան ազգութեան ոգւով և Հաւատքին զօրութեամբ բիւրաւոր Մարտիրոսներ և Վկաներ պսակուեցան և փառաւորուեցան. մենք ենք և միշտ պիտի ըլլանք մեր Աստուածասէր և Ազգասէր Հարց հարազատ զաւակներ. անոնց ազգութեան արիւնը մեր երակներուն մէջ ջերմ և եռանդուն է. անոնց աներկիւղ առաքինութիւնը, խորհրդոց և մտաց հաստատութիւնը, միաբանութեան և միութեան յարատևութիւնը, մէկ խօսքով՝ ազգային իրաւանց և ազգութեան պաշտպանութեանը համար մեզի աւանդած փառաւոր օրինակը և արիական քաջալերութիւնը մեր մտքին և սրտին մէջ անջնջելի է. Աստուածսիրութեամբ ճշմարիտ Կաթողիկէ քրիստոնեայ ըլլալով, և Ազգասիրութեամբ Հայոց ազգին փառքը և շքեղութիւնը աւելցնելով խորտակենք օտարաց և թշնամեաց յարձակմունքը և անիրաւ յափշտակութիւնը. յաղթենք դժուարութեանց, վայելենք և յետագայից վայելել տանք մեր արիութեան և յաղթութեան ազնիւ պտուղներն ու արդիւնքը, և անմահ յիշատակաց արժանի ըլլանք.

* * *

Մ––է– Բ. 1065. Մարտ 16.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՅՈՐԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԴԻ

Մարտ. 17. — Պարոն Յովհաննէս Ստեփաննոսեանց կարգեցաւ երեցփոխ Ս. Տաճարին Էջմիածնի.